ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

19 հունիսի 2021թ. **N 160-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԴԱՇԻՆՔԻ 19.06.2021Թ.ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Պատիվ ունեմ» դաշինքի 19.06.2021թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Պատիվ ունեմ» դաշինքի դիմումում, որը ստորագրված է «Պատիվ ունեմ» դաշինքի լիազոր ներկայացուցիչներ Ռուբեն Մանուկյանի և Անահիտ Ալեքսանյանի կողմից, նշվում է.

«Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 19- հոդվածի, քվեարկության և դրա նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է:

Սույն թվականի հունիսի 19-ին, մոտավորապես 13:30-ի սահմաններում, ՀՀ Վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար,

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Նիկոլ Փաշինյանը իր ֆեյսբուքյան էջով հանդես է եկել ուղիղ հեռարձակմամբ, որով խախտվել են վերը նշված հոդվածի դրույթները:

Մասնավորապես, Ն. Փաշինյանը, ընտրողներին էր ներկայացնում ընտրական գործընթացը, ինչը ԿԸՀ գործառույթն է և, իբրև թեկնածուի, իր լիազորությունների սահմաններում չի, հատկապես՝ ընտրության նախորդող օրը:

Ավելին, ուղիղ եթերի ընթացքում օգտագործված բառապաշարը ըստ էության ասոցացվում էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության հետ, ինչը դիտարկում ենք իբրև քարոզչության կարգի խախտում:

Խնդրում ենք քննարկել և վարչական վարույթ իրականացնել սույն դիմումում նշված փաստով:»:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ պարբերությունների համաձայն՝

«1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է:»:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:»:

Նիստին ներկայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լիազոր ներկայացուցիչը ներկայացրեց իր դիրքորոշումները, որոնք կցվեցին վարչական վարույթի նյութերին:

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի վկայակոչված իրավանորմերը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական քարոզչության՝ Ընտրական օրենսգրքով կամ վերջինիս հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը՝ տվյալ դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը:

Դիմումում ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընգրկված (1-ին

համար) պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանը 2021 թվականի հունիսի 19-ին, այսինքն՝ քվեարկության նախորդող օրը, համացանցով կոչով դիմել է քաղաքացիներին: Համացանցի միջոցով հրապարակային ելույթի ժամանակ օգտագործվել են քարոզչական բնույթի կոչեր: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումում ներկայացված հանգամանքներում առկա է Ընտրական օրենսգրքով նախատեսված՝ քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների միջոցով քարոզչության արգելքի խախտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ առկա են Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ խախտում կատարած թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ նախազգուշացում կիրառելու հիմքեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Պատիվ ունեմ» դաշինքի 19.06.2021թ. դիմումը բավարարել:
2. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի նկատմամբ կիրառել նախազգուշացում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**